

քայլուածքին վրայ: Գնաց դէպի դուռը, Նիզը գրաւ, եւ փոքրիկ բանալի մը հանելով՝ ատաղձեալ պատին մէկ կողմը խրտց, եւ անյայտ դուռ մը բացուեցաւ:

— Որդեակ Թեոդորոս,— ըսաւ,— դու դիտես թէ ես ոչ միայն իբրեւ զաւակ գթեզ կը սիրեմ, այլ նաեւ քու վրադ մեծ համարմունք ունիմ. այս դուռը գաղտնիք մ'է, որ միայն Վարազտիրոց իմ անդրանիկս գիտէ. եւ հիմա ահա քեզի նաեւ կը յայտնեմ. եւ ոչ միայն գիտնալուդ համար բացի առջեւդ, այլեւ անոր համար, որ Բագրատունեաց գանձատունը Թեոդորոս Ռշտունուոյ առաջ բաց է, երբ ազգին պիտոյքը պահանջէ եւ ինչչա՛փ ուզէ լիաձեռն առնու. եւ գործածէ: ուստի արի եկ, որ տեսնես:— Երբ Թեոդորոս մօտեցաւ, տեսաւ փոքրիկ սենեակ մը լեցուն դրամոց քսակներ իրարու վրայ դիզուած. իսկ պառաւը Նոյն սենեկին մէջ գաղտնի դուռ մ'էլ բացաւ, որ ընդարձակ սենեակ մը կը հաներ եւ որ յիբաւի արքայական գանձատուն համարիլ կարելի էր: Յազարներով լիտր ոսկի, ձոյլ-ձոյլ դրուած էր գետինը. ազնիւ փայտերէ գզրոցներ, որ անտարակոյս գոհարեղէն կը պարունակէին, ոսկի եւ արծաթ գահոյքներ, արգարտահեռ վարսակալներ, զարմանալի եւ անգին ոսկէ զարդ զէնքեր դարերէ ի վեր դիզեալ եւ հաւաթեալ աչք եւ միտք կը շլացնէին: Թեպէտ Բագրատունեաց խնայութիւնը հռչակեալ էր ի Յայաստան, բայց Թեոդորոս չէր կարծեր եւ չէր կրնար հաւտալ եթէ աչօք չի տեսներ այնչափ հարստութիւն: Իսկ պառաւը՝

— Առանց դրամի բան առաջ չէրթար, որդեակ Թեոդորոս,— ըսաւ,— դու այսօր ազգին միմիայն յոյսն ես, առանց շողոքորթութեան կրնամ զրուցել թէ Ասպետը՝ որդիս նաեւ եթէ հոս լինէր իրմէ աւելի քու վրադ վստահութիւն ունիմ, ինչպէս գիտեմ թէ Նոյնպէս Յայաստան քու վրադ միայն կրնայ այսօր յոյս դնել աստուծմէ վերջը. եթէ ազգը պիտի կորչի, թո՛ղ Բագրատունիք եւ իրենց գանձերն ալ կորչին: Դարձեալ կը կրկնեմ, ինչ որ պէտք ունենաս ազգին համար այս գանձատունը քեզի բաց է, աւելորդ է քեզի յանձնել թէ որդիս դարձնելու համար աքսորէ պէտք եղած ծախքը չես ինայեր: Ա՛ռ, ուզէ ինչչա՛փ որ յարկ կը համարիս:

Թեոդորոս քիչ մը մտածելէն վերջ ծանրութեամբ այս պատասխանը տուաւ.

— Իշխանուհի, ես միշտ յարգեր եմ գթեզ ինչպէս գիտեք, Բագրատունեաց Տերը՝ ձեր այրը, մեր հայրը եւ մեր զօրավարն էր: Պատերազմի արհեստին մէջ ոչ միայն ես՝ այլ գրեթէ հայոց ամեն նախարարք իւր ձեռասունն եղած են. իւր գերազանցութիւնն ոչ ոք կրնար ժխտել, հիմա եթէ ինք ողջ լինէր, Յայաստան կը հանգչեր աներկբայ: Վասնզի իր ձայնին անհնազանդ լինիլ մէկը չէր յանդգներ: Դուք, Բագրատունեաց Տիկին, իմացեք ձեր այս առաջարկութեամբ՝